

## Տարեկան հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
2002թ. գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքների  
հիմնական արդյունքների մասին

1. Հաշվետու տարում կենտրոնում պետական բյուջեից ֆինանսավորվել են 5 գիտական թեմաներ: Սրանց կատարման ուղղությամբ 2002թ. ձեռք են բերվել հետևյալ արդյունքները.

ա. 2002թ-ին կենտրոնում իրականացվել են տարբեր բնույթի դաշտային հետազոտական աշխատանքներ՝ ազգագրական գիտարշավներ Ախուրյանի, Աշոցքի, Արթիկի, Անիի տարածքներում, Գյումրի և Մարալիկ քաղաքներում /ղեկ., ղեկ.՝ Ս.Հայրապետյան, Կ.Սահակյան, Կ.Բազեյան/, հավաքվել և մշակվել է բանահյուսական մեծաքանակ նյութ /ղեկ., ղեկ., Ս.Պետրոսյան, Կ.Սահակյան/, Հայկաձորի տարածքում հայտնաբերվել և քարտագրվել են նոր հնագիտական հուշարձաններ, կատարվել է հնագիտական արդյունաբեր հետախուզություն մարզի մի շարք տարածքներում, և շարունակվել են պեղումները Բենիամինի անտիկ դաստակերտում և դամբարանադաշտում /ղեկ.՝ Լ.Եզանյան/:

բ. «Տնտեսական զբաղմունքներն ու տնտեսության յուրացնող ձևերը Շիրակում XIX-XXդդ.» թեմայի /ղեկ.՝ պ.գ.թ. Կ.Բազեյան/ կատարման առաջին տարում հիմնականում աշխատանք է տարվել դաշտային նյութերի հավաքման և քարտավորման ուղղությամբ, անցկացվել է ազգագրական գիտարշավ պատմական գավառի տարածքում տնտեսական օժանդակ զբաղմունքների, դրանց ընդգրկման ոլորտների ճշգրտման նպատակով: Կատարող խումբը զգալի մասնակցություն է ունեցել «Հայաստանի թանգարանային հավաքածուներում հայոց տնտեսական կենցաղի տիպական առարկաների տերմինաբանական-բացատրական բառարանի» ստեղծման մեջ /50 բառահոդվածներ/: Թեմայի գծով հաշվետու տարում հրատարակվել են 4 գիտական հոդվածներ և 5 զեկուցումների հիմնադրույթներ, պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ասեղնագործական մշակույթը» թեմայով:

գ. «Ախուրյանի ավազանը մ.թ.ա. 1-ին հազարամյակում /բնակչության էթնիկական կազմը, առասպելաբանական պատկերացումները և պաշտամունքը/» թեմայի /ղեկ.՝ կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.դ. Ս.Պետրոսյան/ ուսումնասիրման առաջին տարին ամբողջությամբ նվիրվել է սեպագիր, անտիկ և միջնադարյան աղբյուրներում առկա աղբուրագիտական նյութերի հավաքմանը, որոնք լույս են սփռում մ.թ.ա. 1-ին հազարամյակում Ախուրյանի ավազանի ցեղային երկրների և դրանց տնտեսական ու ռազմական վիճակի հարցերի վրա: Զգալի աշխատանք է կատարվել նաև վերոհիշյալ ցեղային միավորների տեղադրման, ցեղանունների ստուգաբանության հարցում գոյություն ունեցող տարրնթերցումների ճշգրտման, ինչպես նաև ավազանի հնագույն բնակչության հասարակական կյանքի առանձին կողմերի բացահայտման ուղղությամբ: Ընդ որում, կատարող խումբը առաջ է քաշել և հիմնավորում է լշինդեվրոպական հասարակության եռադասյա կառուցվածքի վերաբերյալ տեսակետը: 2002թ. թեմայի գծով խումբը հրատարակել է 3 գիտական հոդվածներ և զեկուցումների 6 հիմնադրույթներ:

դ. «Շիրակի արդի բանահյուսության ուսումնասիրումը ազգահոգեբանական հայեցակարգով» թեմայի /ղեկ.՝ կենտրոնի ավ. գիտաշխատող հ.գ.թ. Կ.Սահակյան/ գծով առաջին տարում հիմնականում կատարվել է ազգագրական և բանահյուսական նյութերի գրառում, ժողովրդի մեջ կենցաղավարող կենսունակ ժանրերի /ժողովրդական խաղիկներ, քաղաքային երգեր, ընտանեկան ծիսական երգեր և այլն/ պատկանող նյութերի ձայնագրումներ, կատարվել է շուրջ 35 նոր գրառված առածների և ասացվածքների դասակարգում ժանրային և այբբենական հաջորդականությամբ: Կազմվել է 25 բանասացների անվանական, սեռատարիքային և աշխարհագրական անձնագրերը: Խմբի կողմից գիտական շրջանառության մեջ են մտցվել նաև մի շարք նորահայտ ազգագրական

նյութեր: 2002թ. թեմայի գծով խումբը տպագրել է 2 գիտական հոդվածներ և 4 զեկուցումների հիմնադրույթներ:

ե. «Անիի նյութական մշակույթը /ըստ նորահայտ հուշարձանի հնագիտական տվյալների/» թեմայի /ղեկ.՝ պ.գ.թ. Լ.Եգանյան/ առաջին տարում սահմանամերձ գոտում իրականացվել է հնագիտական հետախուզություն մարզի Խարկով գյուղ – Հայկաձոր հատվածում, ուր հայտնաբերվեցին մեծ բնակավայր, դամբարանադաշտ, ինչպես նաև միջնադարում բնակեցված բազմաթիվ քարանձավներ: Կատարվել է հայտնաբերված նյութի ինտենսիվ ուսումնասիրություն. գտածո նյութերի նիսնական թվագրում, կամերալ մշակում: Խումբը սերտորեն համագործակցում է ՀՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության և այլ կազմակերպությունների հետ, ակտիվորեն մասնակցել է ԻԿՕՄՍ-ի կողմից Երևանում և Բյուրականում կազմակերպված «Ավերակ հուշարձանների պահպանությունը» միջազգային գիտաժողովին: Հաշվետու տարում խումբը հրատարակել է 3 գիտական հոդվածներ, պատրաստել 6 զեկուցումների հիմնադրույթներ և տպագրության է ներկայացրել «Շիրակի նորահայտ հնագիտական հուշարձանները» /75 էջ/ աշխատությունը:

զ. «Շիրակի արդի ժողովրդական երգարվեստի ժանրային տաղաչափական և երաժշտախոսքային առանձնահատկությունները» թեմայի /ղեկ.՝ բ.գ.թ. Ս.Հայրապետյան/ ուսումնասիրման առաջին տարում աշխատանքները ունեցել են ինչպես գիտահավաքչական, այնպես էլ վերլուծական ուղղվածություն: Կազմվել է Շիրակի ժողովրդական երաժշտության հրատարակված նմուշների և ձայնագրված բնագրերի համահավաք մատենագիտությունը: Բանահավաքչական արշավների օգնությամբ Գյումրիում, Ախուրիկ և Հայկավան գյուղերում ձայնագրվել են ժողովրդական երաժշտական ստեղծագործության շուրջ 3 տասնյակ նոր նմուշներ, որոնք նոտագրվել են: Կազմվել է ժամանակակից Շիրակի հարսանեկան արարողության ծիսական երգաշարը: Ձայնագրությունները քարտագրվել, վերծանվել և նոտագրվել են: Կատարվել են նկարահանումներ, ինչպես նաև երգասացների անձնագրավորում: Կազմվել է ժամանակակից Գյումրու նվագարանագործ վարպետների ամբողջական անվանացանկը: Թեմայի ուղղությամբ հրատարակվել են 4 գիտական հոդվածներ և 5 զեկուցումների հիմնադրույթներ:

2. –

3. ՇՀՀ կենտրոնում 2002թ. հրատարակվել է «Գիտական աշխատություններ» ժողովածուի 4-րդ հատորը /ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 12 հրատ. մամուլ ծավալով/, նաև ՇՊՄԺ հանրապետական 5-րդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթների ժողովածուն /4 հրատ. մամուլ ծավալով/:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն

Ս.Հայրապետյան